

ՀԱՂՈՐԴՈՒՄ REPORT

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
aelita.dolukhanyan@gmail.com

ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽԱԳԻԾԸ

Նախագծին և չափորոշիչներին ծանոթացել եմ 2020-ի հուլիսի 22-ին, իսկ 23-ին հրավիրվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի արտահերթ նիստ ու ծրագիրը քննարկվելուց հետո մերժվել: Դրանում ավագ դպրոցում ամբողջովին դուրս է թողնվել հայ գրականությունը՝ սկսած Մաշտոցից, ողջ միջնադարը, ներառյալ Խաչատուր Աբովյան:

Նախքան ծրագրի մասին խոսելը, որն ըստ հեղինակների՝ ընդօրինակություն է օտարերկրյա գրականության ծրագրերի, ուզում եմ մեկ փոքրիկ դրվագ ներկայացնել հայի անցյալին ու նկարագրին վերաբերող:

Ֆրանսիական հեղինակավոր «Paris Match» ամսագիրն իր համարներից մեկում հարցազրույց էր տպագրել աշխարհահռչակ կինոբեմադրիչ հայազգի Անրի Վերնոյի հետ: Այդ հարցազրույցի վերնագիրն էր՝ «Երբ լսում եմ մեր եկեղեցիների զանգերը, հիշում եմ իմ ծերացած ծնողներին»: Դրանք Անրի Վերնոյի խոսքերն էին, որոնցով բացատրում էր, թե «Մայրիկ» ֆիլմը նկարահանել է ոչ միայն թուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը դատապարտելու, այլև եվրոպացիներին դաստիարակելու հայերի օրինակով, որոնք իրենց ծերացած ծնողներին երբեք ծերանոց չեն տանում:

Հայի բնավորության ամենամարդասիրական գծերը պատկերված են Ոսկեդարի հայ գրականության մեջ, գալիս են Մաշտոցից, Խորենացուց, անց-

Հայ դպրոցի առարկայական նոր չափորոշիչները և դրանց նախագիծը

նում ողջ միջնադարով, հասնում Աբովյան, Թումանյան, Իսահակյան, Վարուժան, Սիամանթո, Չարենց, Բակունց և ուրիշներ, հասնում մերօրյա տաղանդավոր գրողներին:

Գրիգոր Նարեկացու և Խաչատուր Աբովյանի գլուխգործոցները՝ «Մատենան ողբերգութեան» երկը և «Վերք Հայաստանին» ըստ Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, միջազգային հեղինակություն ունեցող հայագետ Ժան-Պիեռ Մահեի համամարդկային ժառանգություն են:

Միջնադարի մեծերի և Աբովյանի գործերը մեծ հաջողությամբ երկար տարիներ ուսուցանվել են հայկական դպրոցներում ու յուրացվել են, որովհետև դրանք վերժամանակյա դրսևորումներ են: Հանճարեղ Ֆիրդուսին իր «Շահ Նամեում» ասում է. «Եթե մարդը հայրենասեր չէ, մարդ կոչվելու իրավունք չունի»: Ավետարանում ասվում է՝ սիրիր հորդ ու մորդ: Հայրենի գրականությունը մեր հայրն է, իսկ լեզուն մայրն է, դրա համար էլ կոչվում է մայրենի:

Երբ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքի նախասրահում բարձրացնում ես հայացքդ, պատերին ոսկե տառերով կարդում ես, թե ինչ է գրված, հասկանում ես, որ մեր ակադեմիայի երկու աշխարհահռչակ նախագահները՝ Հովսեփ Օրբելին ու Վիկտոր Համբարձումյանը, իմաստնաբար, մեծերի անունից զգուշացնում են նրանց չմոռանալ: Իսկ պատերին գրված են՝ Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Կորյուն, Եզնիկ Կողբացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Տաթևացի և այլ փառապանծ անուններ:

Այդ մեծերն են իրենց հայրենանվեր գաղափարներով մեզ բերել, հասցրել 21-րդ դար, նոր պետականություն՝ իր դրոշով, զինանշանով, օրհներգով, իր ազգային ինքնագիտակցությամբ: Աբովյանը, դիմելով հայ երիտասարդներին, պատգամում է տասը լեզու սովորել, սակայն իր լեզուն ու հավատը պինդ պահել: Ֆրանսիական ակադեմիան, որ հիմնադրվել է XVII դարի սկզբներին, ցարդ իր գերխնդիրը համարում է իր լեզվի ու գրականության պահպանումն ու պրոպագանդան: Ակադեմիան ունի բազմաճյուղ և շատ հարուստ ինստիտուտներ, սակայն նրա գերխնդիրը դպրոցներում ֆրանսերեն լեզուն ու գրականությունը գերադաս առարկաներ համարելն է: Աշխարհի հին քաղաքակրթություն ունեցող բոլոր երկրներն իրենց դպրոցներում գրականության ուսուցումը սկսում են հին շրջանից:

Թուրքիայում, եթե դեռ մնացել են հայկական հուշարձաններ, հիմա կոչվում են թուրքական. այդպես են սովորեցնում նոր սերնդին: Վաղը թուրքա-

Դոլուխանյան Ա.

կան են համարվելու նաև Արևմտահայաստանում ծնված մեր մեծերի հանճարեղ գործերը, ինչպես արքեպանքիներն իրենց մատենագիրներ են համարում Մովսես Կաղանկատվացուն, Դավթակ Քերթոդին, Համամ Արևելցուն, Մխիթար Գոշին, Կիրակոս Գանձակեցուն, Վարդան Արևելցուն, որովհետև նրանք ծնվել են Մեծ Հայքի այն տարածքում, որը խորհրդային իշխանության տարիներին Քեմալ Աթաթուրքի պահանջով տրվել է մինչ այդ աշխարհի որևէ քարտեզի վրա գոյություն չունեցած նորաթուխ Ադրբեջան պետությանը: Նրանք իրենցն են համարում նաև Տիգրան Մեծին նույն տրամաբանությամբ, ինչպես Էրդողանի հրամանով Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի ժամանակ կառուցված (VI դար) Այա Սոֆյա քրիստոնեական հրաշագեղ տաճարն այսօր Ստամբուլում դարձավ մզկիթ: Այդ ոգով են գրվում Թուրքիայի և Ադրբեջանի դասագրքերը, իսկ մենք մերժում ենք վերժամանակյա մեր մեծերին:

Հանրահայտ իրողություն է. իր անցյալը չիմացող ազգն ապագա չունի:

Եթե ուզում են, որ հայ աշակերտներն անցնեն նաև արտասահմանյան գրականություն, ապա թող մտցնեն լրացուցիչ ժամեր, ընտրեն ավելի հարմար հեղինակներ և ոչ թե ծրագրից դուրս դնեն մեր մեծերին, որոնց ստեղծագործություններն ազգապահպան են ու մարդասիրական:

Ինձ ավելի հուզողը ավագ դպրոցի հայ գրականության ծրագիրն է, որը խիստ անկատար է: 1996-97-1997-98 ուս.տարում, երբ վաղուց արդեն և՛ ամբիոնի վարիչ էի, և՛ դոկտոր, պրոֆեսոր, աշխատել եմ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանի 9-10-րդ դասարանում, որը մաթեմատիկական թեքումով էր: Այդ որոշումը կայացրել եմ, որպեսզի պարզեմ, թե ինչու՞ աշակերտները չեն կարդում բնագրերը, ինչու՞ ինքնուրույն չեն գրում ու մտածում և ինչու՞ են արտագրում: Շաբաթական ութ ժամ էի պարապում: Հենց սկզբից աշակերտներին բացատրեցի, որ այդ ժամերը լիովին բավարար են, և որևէ մեկը կարիք չունի կրկնուսույցի, միայն պետք է ջանադիր աշխատել: Ես հասա ցանկալի արդյունքի:

Վերջերս հեռուստացույցով ԿԳՄՍ փոխնախարարը խիստ դիտողություն էր անում այն գրականագետներին, որոնք մերժում էին հայ գրականության, հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության նոր ծրագրերը: Նա ասում էր, թե մեր դպրոցները հետամնաց են, և մեր աշակերտները տեղեր չեն գրավում միջազգային մրցույթներում: Հայոց լեզուն, հայ գրականությունը, հայ ժողովրդի պատմությունը զուտ ազգային առարկաներ են, և դրանք չեն կարող դուրս գալ միջազգային ասպարեզ: Միջազգային ասպարեզ կարող են դուրս գալ բնական գիտությունները՝ ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա... Ի դեպ, տարի-

Հայ դպրոցի առարկայական նոր չափորոշիչները և դրանց նախագիծը

ներ առաջ հիմնալի մեթոդիստ և մաթեմատիկոս Համլետ Միքայելյանի 8-րդ դասարանի հանրահաշվի գիրքը տարա Բոստոն, որպեսզի ցույց տամ թոռնուհուս: Նա սովորում էր Բոստոնի հռչակավոր Վինձոր մասնավոր դպրոցում, որը երկրորդն է ԱՄՆ-ում իր մակարդակով և նախատեսված է միայն ընդունակ երեխաների համար: Թոռնուհիս հայկական դպրոցի մաթեմատիկայի գրքից լուծեց մի վարժություն և ասաց, որ կտանի իր պրոֆեսորին ցույց տալու, որ հայկական դպրոցներում, որոնք ծրի են, անգամ գյուղերում անցնում են նույնատիպ դասագրքով, ինչ որ իրենք:

Ինձ հուզում է ավագ դպրոցից «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի դուրսբերումը: Մեր բուհը կապեր ունի Ֆինլանդիայի Օուլոյի համալսարանի հետ: Երբ ֆինն պրոֆեսորների հետ հանդիպում էր, հարցրեցի, թե որ դասարանում են անցնում իրենց ազգային էպոսը՝ «Կալեվալան»: Ինձ պատասխանեցին՝ բոլոր դասարաններում, որովհետև էպոսն իրենց հպարտությունն է, և իրենք «Կալեվալայի» հատուկ գիտահետազոտական ինստիտուտ ունեն: Տեղյակ պահեմ, որ «Կալեվալայի»՝ «Համաշխարհային գրականության գրադարան» մատենաշարով լույս տեսած ռուսերեն բնագրի առաջաբանի հեղինակը՝ իմաստուն ու մեծատաղանդ Մարիետա Շահինյանը, գրում է. «Անցյալի իմացությունը կամուրջ է դեպի ապագան, կօգնի նաև կարգավորել ներկան»:

Գովելի է, որ նոր ծրագրում փորձում են ներմուծել արտասահմանյան գրականություն: Սակայն այն չպետք է միացնել հայ գրականությանը, այլ անհրաժեշտ է դարձնել նոր առարկա և ընտրել դպրոցին հարմար գրողների գործեր: Նոր ծրագրում ոչինչ չկա ռուս գրականությունից: Միթե Պուշկինը, Տոլստոյը, Չեխովը, Բունինը հարմար չեն ավագ դպրոցի հայ աշակերտներին: Մանավանդ Նոբելյան մրցանակի դափնեկիր Իվան Բունինի «Արսենակ կյանքը» հիմնալի վեպը, որում Արսենն իր հաջողությունների հիմքը համարում է Մոսկվայի Լազարյան ճեմարանն ավարտած իր ուսուցչի տված դասերը: Հետո, ինչու՞ ոչինչ չի դրվել մեր բարեկամ ժողովրդի՝ սերբերի գրականությունից, որից հիմնալի թարգմանություններ է իրականացնում բանաստեղծ, թարգմանիչ, սերբերենը մայրենիի նման տիրապետող Բաբկեն Սիմոնյանը:

Վերանայման կարիք ունի նաև ժամանակակից հայ գրողների ցուցակը, որում չկան տաղանդավոր որոշ ժամանակակից գրողների գործեր: Չկան Էդ. Միլիտոնյանի մեր ժամանակը պատկերող հոյակապ բանաստեղծությունները, չկա Գուրգեն Խանջյանի արձակը, Նորայր Ադալյանի «Արտույտը» հրաշք

Դոլովխանյան Ա.

վիպակը, Մուշեղ Գալշոյանի «Ձորի Միրոն», Կարինե Խողիկյանի պատմվածքները կամ դրամաներից, Սուսաննա Հարությունյանի գործերից, Գագիկ Դավթյանի բանաստեղծություններից, Հայաստանի սահմանային կյանքը պատկերող Սամվել Բեգլարյանի պատմվածքներից և այլն:

Իմ կարծիքով այս ցանկը պետք է կազմեր Հայաստանի գրողների միությունը, որում կան պետականորեն մտածող ղեկավարներ:

Հինգ տարուց ավելի եղել եմ հանրապետական դպրոցական օլիմպիադայի նախագահ՝ «հայ գրականություն» առարկայից: Իմ պահանջն է եղել՝ ոչ մի միջնորդություն: Դրա արդյունքում դիպլոմներ ու գովասանագրեր էին ստանում Տավուշի, Արարատի, Կոտայքի և այլ շրջանների գյուղերից եկած աշակերտները, որոնց ուսուցիչները բարեխղճորեն կարդալ էին տվել հայ գրողների գործերը և սովորեցրել էին սեփական մտքերով ու ինքնուրույն ազատ շարադրություններ գրել:

Տեղին եմ համարում հիշեցնել Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ռենե Գրուանտի՝ Ն.Ադունցի «Քննական պատմություն Հայոց» ֆրանսերեն I հատորի առաջաբանի խոսքերը՝ գրված 1946-ին, Ն.Ադունցի մահվանից հետո: Այդ խոսքերը Տիգրան Մեծի մասին են. «Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»:

Համացանցով ես ստանում եմ այս նոր ծրագրի դեմ ուղղված բողոքի բազմաթիվ նամակներ: Իմ նախկին ուսանողուհին, այժմ ուսուցիչ, իրավացիորեն գրում է. «Իսկ ծրագրի հեղինակները չգիտեն, որ Չարենցն ասել է. «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա»: Իրոք, չկա:

Անհարթ մտքերով, ցրված հարցերով, օտարի թելադրած այս ծրագիրն ընդունելի չէ: Անհրաժեշտ է բոլորովին նոր ծրագիր, որը չի վտանգի մեր հայրենիքի ապագան և չի գոհացնի մեր թշնամիներին, որոնց հայատյաց էությունն իրենց իսկ ձեռքով այսօր դաջված է Սան Ֆրանցիսկոյի հայկական դպրոցի պատերին:

Նախագծում մտահոգություն է հայտնվում, թե հայոց լեզուն սովորեցնելու ժամանակ աշակերտներին չպետք է ծանրաբեռնել քերականական կանոններ ուսուցանելով, որովհետև նրանք հայ են և արդեն գիտեն այդ լեզվով խոսել: Աշխարհում չկա որևէ առաջադիմական դպրոց, որը հրաժարվի ազգային լեզուն քերականությամբ սովորեցնելու ճիշտ ուղուց:

Հայ երեխաները տարիներ ի վեր սովորել են հայոց լեզվի քերականությունը, և այդ դասագրքերը գրել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Արարատ Ղարիբյանը, Էդվարդ Աղայանը, Սերգեյ Աբրահամյանը, ինչպես նաև հայ գրա-

Հայ դպրոցի առարկայական նոր չափորոշիչները և դրանց նախագիծը

կանության և տեսության դասագրքերը գրել են ակադեմիկոսներ և դոկտորներ Սերգեյ Սարինյանը, Էդվարդ Զրբաշյանը, Հրանտ Թամրազյանը, Սուրեն Աղաբաբյանը, Ժենյա Քալանթարյանը, Ազատ Եղիազարյանը, Հենրիկ Բախչինյանը և ուրիշներ: Այս մարդիկ հիմնալի գիտեին, թե ինչ է հայկական դպրոցը և ինչ բովանդակություն պետք է ունենա դասագիրքը:

Ըստ նոր ծրագրի, խնդիր չի դրվում հայ դասական գրողների երկերի բնագրային յուրացումը: Եթե կան որոշ դասական գրողներ, ապա նրանց գործերն այնպես են ցրված ավագ դպրոցի տարբեր դասարաններում, որ գրողի ստեղծագործության վերաբերյալ չկա ամբողջական պատկերացում:

Եթե որևէ մեկն ուշադիր կարդա նախագծի չափորոշիչային դրույթներն, ապա չի հասկացվի՝ արդյոք այն գրված է հայ դպրոցի համար, թե այլ երկրի դպրոցի, որը նոր է ոտք դնում կրթության ու քաղաքակրթության ասպարեզ:

Ի վերջո, ինչպե՞ս կարելի էր ծրագրից դուրս թողնել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որի առաջաբանը հայի համար մշտապես արդիական է. Աբովյանն ասում է. «Էդ ու՛մ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՛ք ճանաչում»:

Ըստ նոր նախագծի, որի մեջ խիստ թերի ձևով են մտել մեր ազգապահպան առարկաները, մեծանալու է մի սերունդ, որը բոլորովին չի գիտակցելու իր ազգային ինքնությունը, մնալու է առանց պետականության, առանց ազգային ու մարդկային արժանապատվության:

Խնդրում եմ՝ բացեք Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Ակսել Բակունցի, Դանիել Վարուժանի, Հակոբ Պարոնյանի, Եղիշե Չարենցի և մեր մյուս մեծերի ստեղծագործությունները և կտեսնեք, որ դրանք շնչում են հայրենասիրությամբ ու համամարդկային գաղափարներով: Սա պետք է լինի մեր ուղեցույցը:

Հիշենք, որ Սանկտ Պետերբուրգից ՀՀ ԳԱԱ «Վիկտոր Համբարձումյան» միջազգային մրցանակ ստացողը սկզբում խոսեց հայերեն ու բացատրեց, թե մեր Ազգային ակադեմիայի նախագահը հարց էր դրել, որ այլազգի իր ասպիրանտները պետք է սովորեն հայերեն ու մինիմում հանձնեն այդ լեզվից: Համբարձումյանն այն աշխարհահռչակ գիտնականն էր, որը Արցախի անկախության համար Մոսկվայում հացադուլ հայտարարեց: Նա գիտեր մի շարք լեզուներ, սակայն հայերի հետ խոսում էր ընտիր հայերենով՝ պահպանելով քերականական բոլոր կանոնները:

Դոլուխանյան Ա.

Հիմա, երբ մեր հինավուրց ու խաղաղասեր ազգը վերստին կանգնած է թուրքական ցեղասպանության առաջ և կորցրել է իր սիրասուն քաջարի բազմաթիվ զինվոր-զավակներին ու տեղահանվում են Արցախի խաղաղ բնակիչները, պարզ է դառնում Ազգային դպրոցի նոր չափորոշիչների խիստ անկատար և վտանգավոր լինելը: